ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 6

«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/11-ՀՔԾ-1» ծածկագրով գնման մրցույթի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 02. 03. 2016թ.

Ժամը՝ 12.00-ին

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝

Շ. Հարությունյան՝ Ծառայության աշխատակազմի ղեկավարի տեղակալ (գնահատող),

անդամներ

Ն. Հովհաննիսյան՝ Ծառայության աշխատակազմի ֆինանսական բաժնի գլխավոր մասնագետ (գնահատող),

Ս. Բաղդոյան՝ Ծառայության աշխատակազմի ֆինանսական բաժնի գլխավոր մասնագետ (գնահատող),

Տ. Հարութունյան՝ Ծառայության աշխատակազմի գործերի կառավարչության պահեստապետ (բացող),

Ա. Մնացականյան՝ Ծառայության աշխատակազմի քարտուղարության պետ (բացող)

«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/11-ՀՔԾ-1» ծածկագրով մրցույթի գնահատման արդյունքների ամփոփում

1. **«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/11-ՀՔԾ-1» ծածկագրով ՇՀ ընթացակարգի հրավերով սահմանված կարգով մասնակիցների վերաբերյալ ՀՀ ՖՆ հարցում ներկայացնելու և ՀՀ ՖՆ- ից եզրակացություն ստանալու վերաբերյալ տեղեկություններ**

16.02.16թ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն հարցում է ներկայացվել առաջին և երկրորդ տեղեր զբաղեցրած մասնակիցներ՝ «Մակրոֆուդ», «Սմարթլայն», «Սոլար Թրեյդինգ», «Մագնատես», «Էկոմիքս», «Մեծ Ծիածան» ՍՊԸ–ների հայտերը ներկայացնելու օրվա դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ: 19.02.2016թ. ՀՀ ֆինանսների նախարարությունից ստացվել է եզրակացություն, ըստ որի «Սոլար Թրեյդինգ» ՍՊԸ-ն ունի հարկային պարտավորություն /20.711 ՀՀ դրամ/:

«Սոլար Թրեյդինգ» ՍՊԸ-ն 24.02.2016թ. հանձնաժողովին ներկայացրել է տեղեկանք ստացված ՀՀ ՖՆ Արաբկիրի հարկային տեսչությունից, ըստ որի տվյալ ամսաթվով ժամկետանց հարկային պարտավորություն չունի:

25.02.2016թ. համակարգողի կողմից նոր հարցում է ուղարկվել ՀՀ ՖՆ՝ «Սոլար Թրեյդինգ» ՍՊԸ-ի հարկային պարտավորությունների վերաբերյալ: Ի պատասխան վերջին հարցման՝ 01.03.2016թ ՀՀ ՖՆ-ից ստացվել է եզրակացություն այն մասին որ «Սոլար Թրեյդինգ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորություն չունի:

Ելնելով վերոգրյալից «Մակրոֆուդ», «Սմարթլայն», «Սոլար Թրեյդինգ», «Մագնատես», «Էկոմիքս», «Մեծ Ծիածան» ՍՊԸ-ների կողմից «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/11-ՀՔԾ-1» ծածկագրով մրցույթի ներկայացված հայտերը առաջարկվում է գնահատել բավարար:

2. **Հանձնաժողովը որոշեց՝**

2.1 «Մակրոֆուդ», «Սմարթլայն», «Սոլար Թրեյդինգ», «Մագնատես», «Էկոմիքս», «Մեծ Ծիածան» ՍՊԸ–ների կողմից ներկայացված հայտը գնահատել բավարար և առաջին տեղը զբաղեցրած մասնակիցներին հայտարարել ընտրված մասնակիցներ՝ ըստ համապատասխան չափաբաժինների

4,13, 40, 41, 48, 60,68	չափաբաժիններով	«ՄԱԿՐՈՖՈՒԴ» ՍՊԸ
7,8,17, 18, 22, 36, 38 ,42 ,43, 44, 54	չափաբաժիններով	«ՍՄԱՐԹԼԱՅՆ» ՍՊԸ
6	չափաբաժնով	«ՍՈԼԱՐ ԹՐԵՅԴԻՆԳ» ՍՊԸ
1,12, 15, 16, 47	չափաբաժիններով	«ՄԱԳՆԱՏԵՍ» ՍՊԸ
2,11,19,21,24,25,26,28, 32, 33,35, 37, 39, 45, 46, 49, 50, 51, 52, 56, 58,59, 61, 62,63,64,65	չափաբաժիններով	«ԷԿՈՄԻՔՍ» ՍՊԸ
3, 5, 9, 10, 14, 20, 23, 27, 29, 34, 53, 55	չափաբաժիններով	«ՄԵԾ ԾԻԱԾԱՆ» ՍՊԸ

2.2 Հաստատել «Մակրոֆուդ», «Սմարթլայն», «Սոլար Թրեյդինգ», «Մագնատես», «Էկոմիքս», «Մեծ Ծիածան» ՍՊԸ–ների հետ պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության տեքստը:

Հանձնաժողովի նախագահ՝ Շ. Հարությունյան

անդամներ՝ Ն. Հովհաննիսյան

Ս. Բաղոյան

Տ. Հարութունյան

Ա. Մնացականյան

Նիստի քարտուղար՝ Գ. Բաբայան